

ԴԱՎԻԹ ՀԱԿՈՒՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ



ԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԵՅՈՒՐՆԵՐԻ ՀԻԵՐԱՐԽԻԿ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Սույն գիտական հոդվածում լուսաբանվում է դրական (գործող) իրավունքի աղբյուրների հիերարխիկ կառուցվածքը: Դրական իրավունքի աղբյուրների հիերարխիկ (աստիճանակարգված) կառուցվածքը բաղկացած է երկու ենթահամակարգերից. պետական մարմինների իրավաստեղծագործության արդյունքներ (օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր, որոշումներ, հռչակագրեր, պայմանագրեր և այլն) և ոչ պետական հաստատությունների նորմաստեղծ գործունեության ակտեր (կորպորատիվ նորմեր):

Հիմնաբառեր- իրավաստեղծություն, նորմաստեղծ գործունեություն, օրենք, ենթաօրենսդրական ակտ, նորմատիվ պայմանագիր, կորպորատիվ նորմ:

Ավելի առարկայականորեն ու նպատակաուղղված կերպով դրական իրավունքի ձևերի վերլուծության համար, պետք է նախևառաջ որոշակիանալ դրական իրավունքի հասկացության, բովանդակության ու իմաստային նշանակության հետ: Սա անհրաժեշտ է կատարել, որովհետև դրական իրավունքի տարակերպ հասկացումը ուղղորդում է դեպի նրա աղբյուրների տարազան հասկացման:

Իրավաբանական գրականության մեջ կուտակվել է դրական իրավունքի հետազոտման հսկայական փորձ:

Դրական իրավունքը կամ իրավաբանական պոզիտիվիզմը ավանդապես դիտարկվում է տարբեր կողմերից¹: Դրա ուժով իրավունքի ձևերն ու աղբյուրները դիտարկելիս չկա նրանցից յուրաքանչյուրին անդրադառնալու անհրաժեշտություն: Ավելի նպատակահարմար է այս դեպքում, թողնելով դրական իրավունքի տեսության բոլոր մանրամասները դիտարկման շրջանակներում, որն արտացոլվում է նրանց զարգացման վաղ փուլերում, կենտրոնացնել ուշադրությունը տվյալ հիմնադրույթի հատուկ առանձնահատկությունների վրա, այն բանի վրա, որը սկզբունքայնորեն տարբերում է դրական իրավունքի տեսությունը այլ իրավական տեսություններից, մասնավորապես բնական իրավունքի տեսությունից:

Անցկացնելով դրական իրավունքի միջև տարբերությունները՝ իրավաբան-գիտնականները ուշադրություն են դարձնում այն բանի վրա, որ աշխարհում չկա դրական իրավունքի միասնական տեսություն, ինչպես նաև բնական իրավունքի միացյալ տեսություն: Իրավաբանական պոզիտիվիզմի ու բնական-իրավական գիտական հոսանքի շրջանակներում «առաջանում է տարբեր իրավա-

կան տեսությունների ամբողջական համալիր»²:

Գիտական գրականության մեջ մատնանշվում է այն, որ իրավաբանական պոզիտիվիզմի գաղափարների հիման վրա առաջացել են այնպիսի հայտնի տեսություններ, ինչպես վերլուծական տեսությունը, նորմատիվիզմի տեսությունը, իրավունքի սոցիոլոգիական տեսությունը և այլ:

Այս գաղափարների հիման վրա առաջացել են ոչ պակաս հայտնի տեսություններ, որոնք ձևավորվել են, ըստ ֆրանսիացի իրավագետ Ժ. Լ. Բերտեյի. «...դրական իրականությունների բազմազանություն, որի հետ տվյալ դոկտրինները կապված են»³: Այն հոգեբանական տեսությունն է, իրավունքի պատմական դպրոցը և այլ տեսություններ, որոնք բարձրանում են դեպի գիտական պոզիտիվիզմ⁴:

Վերլուծելով տվյալ տեսությունների բովանդակությունը, նրանց դերն ու նշանակությունը՝ հետազոտողները նկատում են, որ դրական դոկտրինների մեծ քանակական ու ներքին անմիատարրությունը դարձնում են «շատ խնդրահարույց պոզիտիվիզմի համար ընդհանուր չափանիշի որոնումները» և որ «պոզիտիվիզմի յուրաքանչյուր սահմանում կրում է ընդհանրական բնույթ ու չի կարող պարծենալ ճշգրտությամբ»⁵: Որպես օրինակ՝ կարելի է հղում կատարել հասարակական պայմանագրի տեսության վրա, որը կախված այս կամ այն կոնկրետ բնագավառից կարող է մերժենալ պոզիտիվիզմի կամ իդեալիզմի հետ⁶:

Հետազոտողները, անկասկած, ճիշտ են՝ նշելով պոզիտիվիզմի համար ընդհանուր չափանիշի որոնման խնդրայնության ու նրա սահմանման դժվարությունների մասին: Սակայն գործը չի կարող հարակցվել միայն իրավաբանական պոզիտի-

www.journal.lawinstitute.am

վիզմի ընդհանուր չափանիշի որոնումներին, հատկապես նրա սահմանմանը:

Մասնագիտական գրականության մեջ առանց դրա էլ կան իրավաբանական պոզիտիվիզմի կամ դրական իրավունքի շատ տարբեր սահմանումներ: Որոշ դեպքերում դրական իրավունքը սահմանվում է որպես «սուվերենի հրաման, որը հասցեագրված է անձին կամ անձանց, ով գտնվում է նրա ենթակայության տակ»⁷, ուրիշներում՝ որպես դրական պաշտոնական իրավունք, որը հրապարակվում է առաջին հերթին պետական մարմինների կողմից սահմանված կարգով և համապատասխան կերպով ամրագրվում է նորմատիվ իրավական ակտերում: Երրորդ դեպքում դրական իրավունքը դիտարկվում է որպես իրական, օրենքներում ու այլ փաստաթղթերում առկա, փաստացիորեն նշմարելի նորմատիվ կարգավորիչ, որի հիման վրա սահմանվում է իրավաբանորեն անթույլատրելի վարքագիծը, որոշվում է դատարանների և այլ պետական հաստատությունների կողմից իրավաբանորեն պարտադիր, իմպերատիվորեն իշխանական որոշումներ:

Կան նաև իրարից տարբերվող դրական իրավունքի սահմանումներ: Սակայն իրենց ընդհանրության կամ միակողմանիության պատճառով ամբողջությամբ չեն բացահայտում և չեն կարող բացահայտել դրական իրավունքի ոչ հասկացությունները, ոչ էլ բովանդակությունը: Վերջինիս կարելի է հասնել դրական իրավունքի առավել կարևոր առանձնահատկությունների շնորհիվ: Իրավաբանական գրականության մեջ նրանց մեջ առանձնանում են և դիտարկվում հետևյալները:

Առաջին հերթին, դրական իրավունքի ու պետության միջև օրգանական կապը, նրա՝ պետությանը պայմանավորվածությունն է: Հետևելով այս կապը և դիտարկելով այն որպես իրավական նորմի որոշակի նախանշան, ինչպես նշում է Ս. Ս. Ալեքսևը. «...իրավական նորմերը սոցիալական նորմի տեսակ են, որոնք սահմանվել են պետության կողմից որպես պարտադիր»: Պետությունը կամ ստեղծում է նրա բովանդակությունը, կամ էլ «իր սանկցիայի, ճանաչման միջոցով ձևավորում է նորմը, որոնք առաջացել են իրավաբանական նորմի ուղիով»:

Իրավունքի հայտնի տեսաբան-գիտնական Գ. Ֆ. Շերշենևիչը հայտարարել է, որ. «նորմ իրավունքները պետության պահանջներ են» և, որ պետությունը «հանդիսանալով իրավունքի աղբյուր չի կարող պայմանավորված լինել իրավունքով»: Պետական իշխանությունը, հռչակում էր հեղինակը, «առկա է իրավունքից վեր, այլ ոչ թե նրա ներքո: Պետությունը առաջնային երևույթն է, իրավունքը՝ երկրորդը: Այդպիսին է պետության առաջնայնության տեսությունը, որի վրա կառուցվում է իրավունքի

սահմանումը ըստ հարկադրանքի նախանշանի»:

Իրավունքի պետության հետ օրգանական կապի ու պայմանավորվածության մասին նման պատկերացում տարբեր նրբություններով հանդերձ կարելի է գտնել շատ երկրների իրավական համակարգերում, ներառյալ Հայաստանը: Դրանում համոզվելու համար, բավարար է դիտարկել որոշակի իրավունքների վրա խորհրդային ու հետխորհրդային շրջանների պետության ու իրավունքի տեսության ազդեցությունը ուսումնական գրականության մեջ՝ ինչպես նաև ըստ առանձին բնագավառային դասընթացների: Իրավունքը այստեղ սահմանվում է կամ օրենքի մեջ ներդրված իշխող դասակարգի, կամ որն «արտահայտվում է պետության կողմից սահմանված նորմերով», կամ որպես համընդհանուր «հասարակության պետական կամքը, նրա համամարդկային ու դասային բնույթը արտահայտող» նորմեր, «որոնք հրապարակվել են կամ սանկցիավորվել պետության կողմից»:

Երկրորդ, դրական իրավունքի իմպերատիվ բնույթը: Դրական իրավունքի ելակետային կանխադրյալներից մեկը տարբեր վարիացիաներով՝ դեմոկրատական, լիբերալ, ավտորիտար և տոտալիտար, կա և մնում է «քաղաքակրթված» տեսքով, ինչպես Ջ. Օսթինի իրավունքի, որպես «սուվերենի հրամանի» թեզիս պետության, թագավորի, կամ «այլ սուվերեն ինստիտուտի ձևով, որը հանդես է գալիս որպես բարձրագույն քաղաքական ինստանցիա»: Այս հրամանները ընկալվում են տարբեր պետական մարմինների կողմից, առաջին հերթին, դատարանների կողմից, որպես պաշտոնական ստանդարտներ՝ համապատասխան որոնց պետք է իրականանա արդարադատությունը և որոնց շրջանակներում պետք է կառուցվի նրանց ամբողջ վարքագիծը:

Երրորդ, դրական իրավունքի ֆորմալ-իրավաբանական բնույթը: Կոնկրետ արտահայտում է այն, ստանում է տարբեր ձևեր: Սակայն կարևորը այստեղ մնում է, որ գերակայությունը դրական իրավունքում տրվում է ոչ թե նրա սոցիալական կողմին որպես բնույթ, բովանդակություն, սոցիալական նշանակություն, այլ նրա ֆորմալ-իրավաբանական կողմին:

Իրավակիրառողը, որը օրենսդիրից հետո հաջորդն է Ֆրանսիայում, Իտալիայում, Հայաստանում կամ այլ երկրներում, ուր անփոփոխ կամ փոփոխված կերպով պահպանվում են դրական իրավունքի ավանդույթները, ամենաքիչն են հետաքրքրում իրավունքի սոցիալական, բովանդակային բնագավառները: Նրանք լիովին ճնշվում են իրավակիրառողի գիտակցությունից ու գործողություններից ֆորմալ-իրավաբանական, իսկ հաճախ նաև

տեխնիկաիրավաբանական բնագավառների կողմից:

Դրա հետ կապված՝ սկզբում խորհրդային, իսկ հետո նաև հետխորհրդային գրականության մեջ հատկապես մատնանշվում էր այն, որ իրավաբանական պոզիտիվիզմը գործ ունի ոչ թե իրավական երևույթների բնույթի, այլ նրանց ֆորմալ կողմի հետ: Հիմնվելով օրենքի կանոնային ֆորմալ հասկացության վրա, իրավաբանական պոզիտիվիզմը իրավունքը համարում էր տրամաբանական ձև, որն իր մեջ վերջացնում է հիմնավորումը, որը բաժանվել է բովանդակությունից, որը կապված չէ այլ սոցիալական երևույթների հետ: Ֆորմալիզմը իրավաբանական պոզիտիվիզմի կրեդոն է:

Դրական իրավունքի ֆորմալ բնույթը դիտարկվում է գիտնականների կողմից որպես իրավաբանական պոզիտիվիզմի հիմնական նշաններից մեկը նաև այժմ:

Համեմատելով դրական իրավունքը իր ֆորմալ-իրավաբանական բնագավառում բնական իրավունքի հետ, գիտնականները ոչ առանց հիմնավորումների այն անվանում են վերլուծական իրավունք¹¹: Այն որպես երևույթ, ինչպես նաև նրա հիման վրա առաջացած տեսությունները գործ ունեն բացառապես ֆորմալ հաստատված կանոնների, նորմերի հետ, այսինքն ավտորիտար ստանդարտների հետ, որոնք կոչվում են իրավունք: Դրական իրավունքի ու նրա տեսությունների կողմնակիցները միայն քննարկում են այն մասին հարցը, թե ինչպիսին է ֆորմալ-իրավաբանական իրավունքը, ի տարբերություն բնական իրավունքի՝ կոչվում է նորմատիվ իրավունք:

Դրական իրավունքի այլ նախանշանների շրջանում հետազոտողները անվանում են նաև այնպիսիները, ինչպիսիք են դրական իրավունքի ինստիտուցիոնալ բնույթը, որն արտահայտվում է նրա գոյության ու գործարկման մեջ որպես արտաբնապես օբյեկտավորված ինստիտուտներ, ֆորմալացված իրավաբանական նորմեր, որոնք արտահայտվում են ոչ թե օրենքներում, այլ համապարտադիր նորմատիվ իրավաբանական փաստաթղթերում:

Դրական իրավունքի առանձնահատկություններից մեկը հանդիսանում է այն, որ նա ի համեմատ «մշտական, մարդկության ծննդի պահից նրան ուղեկցող» բնական իրավունքի, ձևավորում է միայն մարդկության դեպի քաղաքակրթության անցման փուլում, երբ առաջանում են օբյեկտավորված հիմքեր առանձին մարդու ազատության համար՝ ավելցուկային ապրանք, սեփականության տեսքով ու առանձին անհատի մեկուսացում¹²:

Դրական իրավունքի տարբերակիչ առանձնահատկությունների թվում, ի համեմատ բնական իրավունքի, գիտական իրավաբանական գրական

նության մեջ անվանվում են նրա կողմից սուբյեկտիվ իրավունքի, որպես օբյեկտիվ, պետության կողմից սահմանված իրավունքից ածանցյալ հասկացության շրջանառության մեջ ներդնումը, դրական իրավունքի ու բարոյականության միջև մշտական կամ բավականին կայուն կապի բացակայությունը, այն բանի, թե ինչպիսին է պոզիտիվիզմի կողմնակիցների պատկերացմամբ իրավունքը, և նրա միջև, թե ինչպիսին այն իրականում պետք է լինի¹³:

Ինչը վերաբերում է դրական իրավունքի ձևերին, ապա որպես այդպիսին հանդես են գալիս նորմատիվ իրավական ակտերը, որոնք բխում են բոլոր տեսակի ու մակարդակների պետական մարմիններից: Դրա հետ մեկտեղ հաշվի են առնվում ոչ միայն սահմանադրական ու ընթացիկ օրենքները, այլ նաև նրանց հիման վրա ու նրանց կատարման հիմնավոր հրապարակված ենթաօրենսդրական ակտերը:

Պետությունը, որը հրապարակում և ապահովում է պահանջների իրացումը, որոնք պարունակվում են նորմատիվ իրավական ակտերում, ավանդապես դիտարկվում են որպես բավականին բարենպաստ հող իրավունքի զարգացման համար: Եթե պետության մեջ միացյալ բարձրագույն իշխանությունը գերիշխում է տվյալ տարածքի ամբողջ բնակչության վրա, ապա այստեղից տրամաբանորեն անխուսափելիորեն բխում է հետևյալ ծայրաստիճան կարևոր եզրակացությունը, իրավունքի համար, որը գործում է պետության ներսում, գերագույն հեղինակությունը, որը սանկցիավորում է իրավական նորմերը, հանդիսանում է պետությունը՝ նրա օրենսդիր իշխանության միջոցով:

Լիբերալ-դեմոկրատական ռեժիմների պայմաններում, ուր դրական իրավունքը որոշ հեղինակների տարբերակով¹⁴, որոնք կիսում են նեոպոզիտիվիստական հայացքներ, ձևավորվում է ոչ միայն պետական, այլ նաև ոչ պետական հիմքի վրա:

Դրական իրավունքի աղբյուրների հանդեպ պետք է ելնել նրանից, որ ֆորմալ-իրավաբանական պլանում այդպիսիք են ոչ միայն պետական կամքը ու նրան համապատասխանող շահերը, այլ նաև սոցիալական միավորումները (որոնք պաշտոնապես մասնակից են իրավաստեղծ գործընթացին), հասարակական հեղինակությունները:

Նրանց մեջ կախված այս կամ այն լիբերալ-դեմոկրատական պետության առանձնահատկություններից, կարող են լինել տարբեր բիզնես-խմբեր, գործատուների միավորումներ, մասնագիտական միավորումներ, հասարակական կազմակերպություններ և այլ ասոցիացիաներ:

Պետական մարմինների ու դրան լիազորված պաշտոնատար անձանց հետ միասին նրանք հե-

տազոտում են ակտեր, որոնք պարունակում են իրավական նորմեր, որոնց առանձնահատկությունը սահմանվում է, ըստ Գ. Ելինիկի, նրանով, որ նրանք հանդիսանում են.

1. մարդկանց արտաքին վարքագծի նորմեր իրար հանդեպ,

2. նորմեր, «որոնք ելնում են ճանաչված արտաքին հեղինակությունից»,

3. նորմեր, «որոնց պարտականությունը երաշխավորվում է արտաքին միջոցներով»,

4. գործող նորմեր, որոնք «ունեն որպես մոտիվ ազդելու, կամքը սահմանելու կարողություն»¹⁵ :

Ինչ վերաբերում է իրական կամքին, որպես դրական իրավունքի աղբյուր, ապա որպես այդպիսին հանդես է գալիս պետական կամքի կառավարող դասերի ու խմբերի շահերով պայմանավորված կերպով պետական կամքը:

Ասվածը չի նշանակում՝ իրավաստեղծ գործընթացին մասնակից ոչ պետական կազմակերպությունների կամքի արհամարում, որոնք աջակցում են հասարակական միավորումների, միությունների, կազմակերպությունների պետական իշխանությանը: Չնայած այս ուժերի կողմից պետության վրա նշանակալից ազդեցությանը՝ նրանք չունեն մեծ նշանակություն դրական իրավունքի ձևավորման գործընթացում:

Ավելին, նրանք բոլորը, անկախ իրենց ֆորմալ-իրավաբանական ու փաստացի նշանակությունից, ստեղծվում են հանուն պետության կողմից ձևավորվող պոզիտիվ իրավունքի ու առօրյա գործունեության մեջ, ըստ ընդհանուր կանոնի այս կամ այն չափով պահպանում են այս իրավունքի պահանջները:

Նրանք չեն հանդիսանում դրական իրավունքի ինքնուրույն ու ինքնաբավ ստեղծողներ, այլ գործում են՝ որպես մասնակիորեն տվյալ լիազորություններով օժտված, պետության նախնական կամ հաջորդող սանկցիայի թույլտվությամբ:

Նրանց կողմից հրապարակվող ակտերը հանդիսանում են դրական իրավունքի յուրահատուկ ձևեր, նրանք համարվում են լրացուցիչ ածանցյալ ավանդական պետության կողմից ստեղծվող այդ իրավունքի ձևերի հանդեպ:

¹ Шафиров В. М. Естественно-позитивное право (проблемы теории и практики). Дис. д-ра юрид. наук. Красноярск, 2005. Austin J. The Province of Jurisprudence Detertined. L., 1833, Hart Н. The concept of Law. L., 1994.

² Шафиров В. М., նշվ. աշխ. էջ 46-47.

³ Бержель Ж. Л. Общая теория права. М., 2000, С. 48

⁴ Նույն տեղում, էջ 51.

⁵ Նույն տեղում, էջ 47.

⁶ Նույն տեղում

⁷ Austin J. The Province of Jurisprudence Detertined. էջ. 134.

⁸ Алексеев С. С. Философия права. М., 2010, С. 29-30.

⁹ Шершеневич Г. Ф. Общая теория права (по изд. 1910-1912 г.) Вып.1., Т.1. С. 252-253.

¹⁰ Austin J. The Province of Jurisprudence Detertined. էջ. 134-135.

¹¹ Нерсиянц В. С. Общая теория права и государства. Учебник для вузов. М., 2015, С. 385-386.

¹² Алексеев С. С. Նշվ. աշխ., էջ 29-30.

¹³ Шафиров В. М. Естественно-позитивное право (проблемы теории и практики). Дис. д-ра юрид. наук. Красноярск, 2005, С. 53-54.

¹⁴ Философия права. Концептуальные основы преподавания в юридических вузах. М., 2016. С. 52-53

¹⁵ Елинник Г. Общее учение о государстве. СПб., 2007, С. 244-245.

Դավիդ Ակոբյան

Аспирант института философии, социологии и права
Национальной Академии Наук Республики Армения

РЕЗЮМЕ

Иерархическая структура источников позитивного права

В настоящей научной статье освещается иерархическая структура источников позитивного (действующего) права. Иерархическая структура источников позитивного (действующего) права состоит из двух подструктур: плодов правотворчества государственных органов (законов, подзакондательных актов, постановлений, деклараций, договоров и пр.) и актов, являющихся результатом нормотворческой деятельности негосударственных учреждений (корпоративные нормы).

Ключевые слова: правотворчество, нормотворческая деятельность, закон, подзакондательный акт, нормативный договор, корпоративная норма.

David Hakobyan

PhD student at the Philosophy, Sociology and Law Institute of the
National Academy of Sciences of the Republic of Armenia

SUMMARY

Hierarchic Structure of Positive Law Sources

The present scientific article highlights the hierarchical structure of the sources of positive (existing) law. The hierarchical structure of the sources of positive (acting) law consists of two substructures: the fruits of law-making state bodies (laws, sub-legislative acts, resolutions, declarations, agreements, etc.) and acts being the result of legislation of non-governmental institutions (corporate norms).

Keywords: law-making, legislation, law, sub-legislative act, normative contract, corporate norm.